Կազմված է 14.03.2016թ.

և բաղկացած է 12 թերթից

Տպագրված է 4 օրինակից

Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
14.03.2016թ. N 24-Ա ՀՐԱՄԱՆՈՎ

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «08» 07 2015թ
Գրանցման N 264.210.864444
Վկայական N 03Ա 1014444
ՀՎՀՀ 00144572
08.07.2015թ. գրանցված
կանոնադրության փոփոխությունը
գրանցված է պետական ռեգիստրի
գործակալության կողմից «17» 03 2016թ.

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(նոր խմբագրություն)

ք. Երևան-2016

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի
2016թ. «14» 03 N 24-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակով չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և դրանից բխող այլ իրավական ակտերով:

3. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

4. Կազմակերպությունը պատասխանատու չէ Հիմնադիր պարտավորությունների համար: Կազմակերպության Հիմնադիրը պատասխանատու չէ Կազմակերպության պարտավորությունների համար:

5. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից:

6. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և Կազմակերպության հայերեն (ըստ անհրաժեշտության՝ ռուսերեն և (կամ) անգլերեն) անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ. կարող է օտարերկրյա և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերում բացել հաշիվներ՝ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ՝ արտարժույթով:

9. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

2) հայերեն կրճատ՝ «Մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ,

3) ռուսերեն լրիվ՝ "Спортивно-концертный комплекс имени Карена Демирчяна" государственная некомерческая организация,

4) ռուսերեն կրճատ՝ "Спортивно-концертный комплекс" ГНО,

5) անգլերեն լրիվ "Sports and Concert Complex after Karen Demirchyan" State Non-Commercial Organization,

6) անգլերեն կրճատ՝ "Sports and Concert Complex" SNCO:

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0028, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) մշակույթի, սպորտի (մարզական), սոցիալական, կրթության (նպատակ ունենալով աջակցելու՝ հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով անձի դաստիարակության գործընթացին) ոլորտներին առնչվող հանրային և մասնավոր տարաբնույթ միջոցառումների նախաձեռնումը և (կամ) իրականացումը,

2) հանրապետական նշանակության հուշարձան (համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշման N 1

հավելվածի) հանդիսացող՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» կառույցի պահպանությունը և հուշարձանի հանրահռչակմանն ուղղված ծրագրերի մշակումը և (կամ) իրականացումը,

12. Կազմակերպությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար սահմանում է իր գործունեության հիմնական առաջնայնությունները և մշակում դրանց իրագործման ծրագրերը:

13. Կազմակերպությունը Հիմնադրի որոշմամբ կարող է հանդիսանալ այլ՝ այդ թվում առևտրային և ոչ առևտրային կազմակերպության (կազմակերպությունների) հիմնադիր կամ մասնակից:

14. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) հանրային (մասսայական) և (կամ) մասնավոր միջոցառումների վճարովի կազմակերպում (իրականացում), մասնավորապես՝

ա. փառատոներ,

բ. համերգներ,

գ. հանդեսներ,

դ. հուշ-երեկոներ,

ե. լուսաձայնային ներկայացումներ,

զ. շքահանդեսներ,

է. կինոդիտումներ,

ը. թատերական ներկայացումներ (խաղեր),

թ. ցուցահանդեսներ,

ժ. ապրանքների ցուցահանդես-վաճառքներ,

ժա. տոնավաճառներ,

ժբ. սպորտային (մարզական) բնույթի մրցումներ (խաղեր),

ժգ. սպորտային բնույթի (մարզական) դասընթացներ (մարզումներ),

ժդ. սպորտային բնույթի (մարզական) հյուրախաղեր,

ժե. լումներ,

ժզ. գիտաժողովներ,

ժէ. կրթական բնույթի դասընթացներ,

ժը. դասախոսություններ,

ժթ. բանախոսություններ,

ի. սեմինարներ,

իա. սիմպոզիումներ,

իբ. մասնավոր և (կամ) հանրային հանդիսություններ,

իգ. ժամանցային միջոցառումներ,

2) հանրային սննդի կազմակերպում և իրացում,

3) կինոֆիլմերի, տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի (ինչպես նաև այլ ձևաչափերով տեսանյութերի), տեսահոլովակների, վիզուալ գովազդի արտադրության և դրանց հետ կապված ծառայությունների մատուցում,

4) լուսանկարչական նյութերի մշակման և լուսանկարչության բնագավառի ծառայությունների մատուցում,

5) երաժշտական և այլ ձայնագրությունների կազմակերպման ծառայությունների մատուցում (կամ արտադրում), մասնավորապես՝

ա. ձայներիզների, խտասկավառակների, կրիչների վրա երաժշտության, ձայնային տեղեկատվության բնօրինակի գրառման ծառայությունների կազմակերպում,

բ. ձայնագրությունների հրապարակություն. արդյունքի տարածում և բաշխում (իրացում) մեծածախ ու մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների կամ անմիջական սպառողների շրջանակներում,

6) մարզահամերգային միջոցառումների բնույթից բխող հուշանվերների և կենցաղային իրերի արտադրության կազմակերպում և (կամ) դրանց իրացում,

7) միջոցառումների մուտքի համար նախատեսված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված տարատեսակ տոմսերի իրացում,

8) մարզահամերգային միջոցառումների բնույթից բխող պրոդյուսերական ծառայությունների մատուցում,

9) միջոցառումների կազմակերպման (իրականացման) վերաբերյալ խորհրդատվության մատուցում:

15. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շուհույթն ուղղվում է Կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացմանը:

16. Կազմակերպությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

17. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և գործադիր մարմինը (այսուհետ՝ Տնօրեն):

18. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

19. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

20. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,

2) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

21. Վարչությունը՝

1) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

2) հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը, դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները, նշանակում կամ ընտրում է Տնօրենին, նշանակում է Տնօրենի տեղակալներին,

3) սահմանում է Կազմակերպության կառավարման համակարգը,

4) հաստատում է Խորհրդի աշխատակարգը,

5) նշանակում է Կազմակերպության լուծարման հանձնաժողովը և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Կազմակերպության Տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

7) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

8) հաստատում է Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ Հայաստանի Հանրապետությանը պատկանող գույքի կազմը,

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության Տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

10) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

11) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

12) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

22. Խորհուրդը կազմված է 5 ֆիզիկական անձից: Խորհրդի կազմում ընդգրկվում են մեկական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունից, երկուսը նշանակվում են Վարչության կազմից, իսկ մեկը՝ Կազմակերպության աշխատավորական կոլեկտիվի անդամներից:

23 Խորհրդի անդամներից ընտրվում է խորհրդի նախագահ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

24. Խորհուրդը՝

1) Կազմակերպության գործունեությանը, նպատակների և խնդիրներին համապատասխան՝ Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Վարչությանը,

2) ըստ անհրաժեշտության՝ քննարկում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում Վարչություն,

3) ըստ անհրաժեշտության՝ առաջարկություններ է ներկայացնում Վարչությանը Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի վերաբերյալ,

4) քննարկում և հաստատում է Կազմակերպության Տնօրենի հաշվետվությունները,

5) քննարկում է Կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունները,

6) հաստատում է Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները,

7) նշանակում է Կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր:

25. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

3) կազմակերպում է նիստի արձանագրության վարումը:

26. Կազմակերպության Խորհրդին չեն կարող վերապահվել Հիմնադրի, Վարչության կամ Տնօրենի լիազորությունները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

27. Կազմակերպության Տնօրենը չի կարող լինել Խորհրդի անդամ: Նա իրավունք ունի Խորհրդի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

28. Խորհրդի յուրաքանչյուր անդամ նշանակվում և ազատվում է Վարչության պետի հրամանով:

29. Խորհրդի անդամի լիազորությունը կարող է դադարել նաև Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով (երեք-չորրորդ):

30. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է գումարված նիստերի (այսուհետ՝ Նիստեր) և Նիստերում ընդունված որոշումների միջոցով:

31. Նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև կարող են գումարվել Վարչության և (կամ) Տնօրենի պահանջով:

32. Նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Նիստի գումարման ժամանակացույցը և օրակարգը հաստատում է Վարչությունը՝ Խորհրդի նախագահի առաջարկությամբ:

33. Խորհրդի նիստերը համարվում են կայացած նիստերի քվորումի ապահովման դեպքում: Խորհրդի նիստի քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

34. Խորհրդի որոշումներն ընդունվում են Նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Առանձին դեպքերում Խորհրդի որոշումներն ընդունվում են հեռակա հարցման միջոցով:

35. Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

36. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

37. Կազմակերպության Տնօրենը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը: Տնօրենին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) Վարչության պետը:

38. Կազմակերպության Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի և Վարչության պետի հրամաններով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

4) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

5) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

6) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սահմանում է Կազմակերպության աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափերը (հավելումները, հավելավճարները, լրավճարները),

8) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև և վերահսկում դրանց կատարումը,

9) Հայաստանի Հանրապետության գործող և օտարերկրյա բանկերում բացում է հաշիվներ,

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11) չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

39. Կազմակերպության Տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Վարչությունը (իրավասու անձը): Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները Վարչության, Կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները,

պայմանագրի դադարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերը:

40. Կազմակերպության Տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը կարգավորվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

41. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

42. Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

43. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

44. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացված եկամուտները (այդ թվում՝ ֆինանսական միջոցները, արտադրանքը) Կազմակերպության սեփականությունն են:

45. Հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքը:

46. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

47. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն ստական կարգով:

48. Կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հատկացումներից,

2) Կազմակերպության իրականացրած ձեռնակատիրական գործունեությունից ստացված ամուտներից,

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական ձանց (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) նվիրատվություններից, իրաբերություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից,

4) Կազմակերպության գույքից և գույքային իրավունքից ստացված եկամուտներից (այդ լում՝ արտադրանքից),

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

49. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի ող հանգեցնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող նանսավորման չափերի նվազմանը:

50. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է ապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

51. Խոշոր գործարքը կատարվում է Վարչության համաձայնությամբ:

52. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի ռնրապետության օրենքի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ստական կարգով ճանաչվել անվավեր՝ Հիմնադրի և Վարչության հայցի հիման վրա:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

53. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի ոշմամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

54. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց ավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

55. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

56. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

57. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: